«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսումնական փաթեթի ստեղծում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող սովորողների համար

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Սյունե Ուլիխանյան

Դպրոց՝ Երևանի Ա. Իսահակյանի անվ. հ.16 ավագ դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

1. Ներածություն_____3
2. Կոլեկտիվ ուսուցման եղանակը՝ որպես ներառական կրթության կարևոր բաղադրիչ _____4
3. Փոխվարժանքի մեթոդիկայի նկարագրությունը _____5
4. Բառագիտություն թեմայից մշակված քարտային աշխատանքներ_____ 6-21
5. Եզրակացություն _____ _____22
6. Օգտագործված գրականության ցանկ_____23

Ներածություն

ՀՀ Հանրակրթության մասին օրենքում ԿԱՊԿ ունեցող երեխաների սահմանումը տրվել է հետևյալ կերպ.<<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝ խոսքի և լեզվի , հաղորդակցման,լսողության,տեսողության,մտավոր, հուզական , վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված ՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող ,ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձ, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ , ներառյալ ՝ խելամիտ հարմարեցումներ /ՀՕ-35-ն, Հոդված 1.4/:

Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող սովորողների և նրանց ՝ դպրոցում առավելագույն ներառման մասին խոսելիս անհրաժեշտ է առաջին հերթին տիրապետել այն առանձնահատկություններին , որոնք առավելապես դրսևորվում են այս խնդրի դեպքում : Մտավոր զարգացման խնդիրը միշտ նույն արտահայտությամբ հանդես չի գալիս , այն կարող է լինել թեթևից մինչև խորը աստիճանի , որոնցից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատկությունները և հիմնականում այդ առանձնահատկությունների տիրապետումից է կախված հաջողությունը , որին ձգտում է հասնել ուսուցիչն իր աշխատանքում : Սա նշանակում է , թե ինչ կարող է անել սովորողը ,և ինչն է անհաղթահարելի իր համար:

Հարկ է հաշվի առնել այն հանգամանքը ,որ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող սովորողները շատ հաճախ ունենում են .

1.Սահմանափակ ծավալի հիշողություն

2. Կամային ուշադրության դժվարություններ

3. Ընկալման առանձնահատկություններ

4. Մտածողության գործընթացն ավելի դանդաղ է

5. Առկա են հաղորդակցման դժվարություններ

Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով՝ փորձեցի ուսուցման կոլեկտիվ եղանակով մշակել <<Բառագիտություն>> թեման՝ հարմարացնելով ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական պահանջմունքներին:

Կոլեկտիվ ուսուցման եղանակը՝ որպես ներառական կրթության կարևոր բաղադրիչ

Արդի մանկավարժությունը հանրությանը առաջարկում է բազմաթիվ կրթական գաղափարներ և ձեռքբերումներ: Ելնելով այս դրույթից՝ կարծում եմ ,որ յուրաքանչյուր ուսուցանող, հենվելով սեփական փորձի վրա, ինքը պիտի որոշի , թե իրեն ինչ մանակվարժական տեխնոլոգիաներ են անհրաժեշտ որակյալ և ճիշտ ուսուցում կազմակերպելու համար:
Ավելի քան տասը տարի է , ինչ Հայաստանի կրթության ոլորտում կիրառվում է ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակը: Կրթության այս եղանակը հնարավորություն է տալիս հենվել սովորողների համագործակցության վրա և կազմակերպել արդյունավետ ուսումնական պարապմունքներ: Ուսուցման կոլեկտիվ եղանակն իրականացվում է աստիճանաբար, փուլերով , ինչն էլ ենթադրում է կրթական գործընթացի շարունակականություն:
Կոլեկտիվ ուսումնական պարապմունքները թելադրում են իենց մեթոդիկաները: Ելնելով այս ամենից՝ հայոց լեզու առարկայի բառագիտություն թեմայի վերաբերյալ փորձեցի կազմակերպել ուսուցում փոխվարժանքի մեթոդիկայով:

Կարծում եմ՝ այս մեթոդով աշխատանքը զգալիորեն կդյուրացնի ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման և իմացական ոլորտը : Հարկ է նշել նաև այն հանգամանքը , որ այս տիպի աշխատանքներում կրթության գործընթացին մասնակցում են ոչ միայն ԿԱՊԿՈՒ սովորողները , այլև մյուս աշակերտները : Այս պարագայում ԿԱՊԿՈՒ սովորողը ուսուցման գործընթացում իր դասընկերոջ հետ գտնվում է լիարժեք հավասարության պայմաններում , ինչն էլ շատ կարևոր է այսօրվա ներառական կրթության տեսլականում:

Փոխվարժանքի մեթոդիկայի նկարագրությունը

Փոխվարժանքի մեթոդիկան նախատեսված է **անցած նյութի** կրկնության , ամրապնդման համար: Այս մեթոդիկայով աշխատելու համար անհրաժեշտ է պատրաստել հատուկ քարտեր , յուրաքանչյուրի վրա մի քանի հարցեր իրենց պատասխաններով: Քարտերը համարակալվում են : Ծրագրի որոշակի հատվածի նախնական յուրացումն ավարտած սովորողներից կազմվում է համահավաք խումբ փոխվարժանքի համար: Յուրաքանչյուրն ստանում է խմբի մյուս անդամների քարտերից տարբերվող քարտ: Սկզբում աշակերտը ծանոթանում է իր քարտի բովանդակությանը:

Հետո աշակերտները բաժանվում են զույգերի և աշխատում միմյանց հետ:

Ենթադրենք աշակերտներից մեկին տրվել է / Բ.Ռ.Գ1/քարտը , իսկ մյուսին /Բ.Ռ.Գ2/-ը: Առաջին աշակերտը երկրորդին հարցնում է իր քարտի առաջին հարցի պատասխանը: Երկրորդ աշակերտը պատասխանում է հարցին, իսկ առաջինը ստուգում է : Եթե պատասխանը սխալ է , ապա առաջին աշակերտը կարդում է ճիշտ պատասխանը, որից հետո ներկայացվում է երկրորդ , երրորդ և մյուս հարցերը:
Երբ առաջին աշակերտը ավարտում է իր քարտի բոլոր հարցերը, զուգընկերները փոխում են իրենց դերերը: Այժմ երկրորդ աշակերտն է ներկայացնում իր քարտի հարցերը, իսկ առաջին աշակերտը պատասխանում է այդ հարցերին: Աշխատանքի ավարտից հետո նրանք բաժանվում են , սակայն քարտերը միմյանց հետ չեն փոխանակում: Փոխվարժանքի մեթոդիկան չի ենթադրում ոչ հատուկ մեկնարկի գործընթաց , ոչ ուսուցչի մշտական ներկայություն: Դա ուսուցչին հնարավորություն է տալիս լինելու այն համահավաք խմբերում , որտեղ ուսուցչի ներկայության կարիք կա:[1]

[1] Մանուկ Մկրտչյան Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական տեսական և գործնական հարցերը/ էջ 115, 118/

Ստորև ներկայացնում եմ բառագիտություն թեմայից փոխվարժանքի մեթոդիկայով կատարած աշխատանքս:

Բառագիտություն

Բ.Ռ.Գ 1.

1.Որո՞նք են լեզվաբանության բաժինները:

Պատ. - *Այդ բաժիններն են հնչյունաբանությունը, բառագիտությունը և քերականությունը: Քերականությունն էլ իր հերթին բաժանվում է 2 ենթաբաժնի՝ ձևաբանություն և շարահյուսություն:*

2. Ո՞րն է բառագիտության ուսումնասիրության հիմնական միավորը:

Պատ.- *Բառագիտության ուսումնասիրության հիմնական միավորը բառն է:*

3. Ի՞նչ է ուսումնասիրվում բառագիտության մեջ:

Պատ.- Բառագիտությունը լեզվանաբանության այն բաժինն է , որում ուսումնասիրվում են բառերի ծագումը, ձևը, իմաստը, կառուցվածքը ինչպես նաև բառարաններն ու նրանց տեսակները:

Բ.Ռ.Գ 2.

1. Ի՞նչ է բառապաշարը:

Պատ.- *Ամեն մի լեզու ունի իր բառերի ամբողջությունը, որն էլ կոչվում է բառապաշար:*

2. Ի՞նչ է արտացոլում բառապաշարը

Պատ.- *Ամեն մի լեզվի բառապաշարն արտացոլում է այդ լեզվով խոսող ժողովրդի կենցաղը, մշակույթը, սովորույթները, աշխարհագրական պայմանները:*

3. Ի՞նչ ճանապարհով է հարստանում բառապաշարը:

Պատ.- *Հրաստացումը կատարվում է 2 միջոցով. Լեզվում եղած արմատներով ու ածանցներով նոր բառեր են կազմվում, կամ այլ լեզուներից բառեր են փոխառվում: Այսպիսով բառապաշարի հարստացման միջոցներն են բառակազմությունը և փոխառությունը:*

4. Քանի՞ բառ ունի ժամանակակից հայերենի բառապաշարը:

Պատ.- *Շուրջ 250000 բառ:*

Բ.Ռ.Գ 3.

1.Ի՞նչ է փոխառությունը:

Պատ.- *Փոխառությունները մի լեզվից մի այլ լեզվի անցած բառերն ու քերականական իրողություններն են:*

2. Ինչպիսի՞ն են լինում փոխառությունները:

Պատ.- *Լինում են անմիջական և միջնորդված: Անմիջական են տվյալ բառի սկզբնաղբյուր լեզվից ուղղակիորեն վերցրած բառերը : Միջնորդված են այն փոխառությունները, որոնք կատարվում են ոչ թե տվյալ բառի սկզբնաղբյուր լեզվից, այլ մի ուրիշ՝ միջնորդ լեզվից:*

3. Հայերենում քանի՞ փոխառյալ արմատ կա ըստ Հ. Աճառյանի հաշվումների:

Պատ.- *Ըստ Հ. Աճառյանի հաշվումների հայերենի շուրջ 11000 արմատից փոխառյալ է 4015-ը:*

4. Ո՞ր լեզուներից է հայերենը հիմնականում բառեր փոխառել:

Պատ.- *պարսկերենից ,/թուր, արմավ, դար, գումարտակ/ հունարենից,/ակադեմիա, եպիսկոպոս, կիթառ, պոետ/, արաբերենից/ նարինջ, թուրինջ, գազար/, ռուսերենից և եվրոպական լեզուներից:*

Որպես փոխատու լեզու՝ հայերենից հնչյունական զգալի փոփոխություններով այլ լեզուների են անցել մածուն, լավաշ, խաչքար, մատենադարան բառերը:

Բ.Ռ.Գ 4.

1. Ի՞նչ է բառապատճենումը:

Պատ.- *Բառապատճենումը լեզվական այն իրողությունն է , երբ օտար լեզվի որևէ բարդ բառի առանձին բաղադրիչներ նույնությամբ , բառացի թարգմանվում են , նրանց միավորումով ստեղծվում են նոր բառեր:*

2. Ի՞նչ է իմաստային պատճենումը:

Պատ.- *Պատճենումները լինում են նաև իմաստային, երբ փոխառվում է օտար բառի իմաստը: Օր.՝ հայերեն ոչինչ բառը ռուսերենի* ничего*-ի ազդեցությամբ:*

Բ.Ռ.Գ 5.

1. Ի՞նչ սկզբունքներով են դասակարգվում բառերը:

Պատ.- *Բառերը դասակարգվում են ըստ ծագման, ըստ կազմության ,իսկ ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության առանձնանում են հոմանիշ, հականիշ, համանուն և հարանուն բառեր:*

2. Որո՞նք են հոմանիշ բառերը:

Պատ.- *Միևնույն խոսքի մասին պատկանող բառերն են, որոնց իմաստները լիովին կամ մասնակիորեն համընկնում են:*

3. Ի՞նչ տեսակների են բաժանվում հոմանիշները:

Պատ.- *Հոմանիշների երկու տարատեսակներ են տարբերակվում՝ համանիշներ, որոնք արտահայտում են մոտ,մերձավոր իմաստներ, և նույնանիշներ, որոնք արտահայտում են նույնական իմաստներ:*

4. Ի՞նչ խոսքի մասերից կարող է կազմվել հոմանշային շարքեր:

Պատ.- *Հոմանշային շարքեր կարող են կազմվել գրեթե բոլոր խոսքի մասերից . առավելապես տարածված են գոյականներով, ածականներով, բայերով կազմված հոմանիշները,բայց գործածական են նաև այլ խոսքի մասերով կազմված հոմանիշները ինչպես դերանուն , կապ, շաղկապ, վերաբերական և ձայնարկություն:*

Բ. Ռ. Գ 6.

1. Որո՞նք են հականիշ բառերը:

Պատ.- *Հականիշները իրար հակադիր իմաստ արտահայտող բառերն են :*

2. Իմաստային առումով ի՞նչ տեսակների են լինում հականիշները:

Պատ.- *Լինում են բացարձակ և ժխտական: Բացարձակ հականիշները ցույց են տալիս տրամաբանորեն իրար հակառակ հասկացություններ, ինչպես՝ բարեկամ – թշնամի, կարճ – երկար և այլն:*

Ժխտական են այն հականիշները, որոնց զույգերի մեջ մտնող անդամներից մեկը ժխտում է մյուսի արտահայտած հատկանիշի առկայությունը, ինչպես՝ ազնիվ – անազնիվ և այլն:

3. Կազմության առումով ի՞նչ տեսակների են լինում հականիշները:

Պատ.- *Լինում են նույնարմատ և տարարմատ: Նույնարմատ են նույն արմատից կազմված հականիշները, օր.՝ դիմավոր – անդեմ, զգայուն – անզգա:*

Տարարմատ հականիշները կազմվում են տարբեր արմատներով, օր.՝ մեծ- փոքր, երկար- կարճ:

Բ.Ռ.Գ 7.

1. Ո՞ր բառերն են կոչվում համանուն:

Պատ.- *Համանուն են այն բառերը, որոնք ունեն նույն ձևը , սակայն տարբեր իմաստներ են արտահայտում:*

2.Ի՞նչ տեսակներ ունեն համանունները:

Պատ.- *Լինում են 1/ բառային , բառաքերականական, քերականական.2/ լիակատար և մասնակի.3/ բուն ,նույնահունչ և նույնագիր:*

3.Որո՞նք են բառային ,բառաքերականական նքերականական համանունները:

Պատ.- *Եթե համանունները քերականորեն չփոփոխված , ուղիղ ձևով բառեր են , կոչվում են բառային, օր.՝ մարտ- մարտ, հոտ-հոտ: Եթե բառերից մեկը ուղիղ ձև է, իսկ մյուսը՝ քերականորեն փոխված բառաձև , ապա դրանք կոչվում են բառաքերականական: Օր.՝ օղի- օղի, անցավ- անցավ:*

Քերականորեն փոփոխված բառաձևերը քերականական համանուններն են: Օր.՝ ջրի- ջրի:

Բ.Ռ.Գ 8.

1.Որո՞նք են լիակատար և մասնակի համանունները:

Պատ. – *Բառային համանուններից շատերը ուղիղ և քերականորեն փոփոխված ձևերում համընկնում են օր.՝ փող-փող, փողի-փողի, փողեր-փողեր, սրանք լիակատար համանուններն են:*

Համանունները կարող են իրենց համանունությունը պահպանել քերականական ոչ բոլոր ձևերում. օրինակ՝ զատիկ բառը /միջատ/ ուղղականում համանուն է, զատիկ քրիստոնեական տոն/ բառին ,իսկ սեռականում՝ ոչ : Սրանք մասնակի համանուններն են:

2. Որո՞նք են բուն, նույնահունչ, նույնագիր համանունները:

Պատ.- *Բուն են նույն ձևով գրվող և արտասանվող համանունները:*

Նույնահունչ են նույն ձևով հնչող ,բայց գրությամբ տարբեր համանունները:

Նույնագիր են այն համանունները, որոնք նույն ձևով են գրվում , բայց տարբեր են արտասանությամբ:

<u>Բառակազմություն</u> **Դաս 1- ին**

1.Ինչպե՞ս է տեղի ունենում բառապաշարի համալրումը

Պատ ՝ Բառապաշարի համալրումը կատարվում է 2 եղանակով՝

ա/ հայոց լեզվի բառակազմական տարբեր միջոցների և եղանակների գործադրումով :

բ/ օտար լեզուներից կատարվող փոդառություններով:

2. Ժամանակակից հայերենում քանի՞ բառակազմական եղանակ է գործում

Պատ՝ Ժամանակակից հայերենում գործում է բառակազմական երեք եղանակ՝ա/ածանցում, բ/ բառաբարդում,գ/ հապավում:

3. Ի՞նչ է նշանակում ածանցում

Պատ՝ Ածանցումը արմատի, բառի կամ բառահիմքի և ածանցի միացությամբ նոր բառեր կազմելու երևույթն է :

4. Ի՞նչ է ածանցը

Պատ՝ ածանցը բառակազմական մասնիկ է , որն ավելանալով արմատին կամ բառին ՝ փոխում է նրա իմաստը և նոր բառ կազմում:Ածանցն առանձին գործածություն չունի :Հայերենն ունի մոտավորապես **200**ածանց:

5. Ըստ դիրքի քանի՞ տեսակների են լինում ածանցները

Պատ՝ Ածանցները կազմվող բառին կարող են միանալ սկզբից կամ վերջից: Սկզբից դրվող ածանցները նախածանցներ են , վերջից միացողները ՝ վերջածանցներ: Հայերենում բազմաթիվ բառեր կան ,որոնք և նածախածանց , և վերջածանց ունեն, օրինակ *ստոր*գետն*յա*, *անդր*բևեռ*ային* , այդպիսի բառերը կոչվում են ***համածանցավոր:***

Դաս **2**-րդ

1.Ինչպե՞ս են նախածանցները արմատին կամ բառին միանում

Պատ ՝ Նախածանցները արմատին կամ բառին միանում են երկու եղանակով առանց հոդակապի ինչպես՝ ապերախտ, դժկամ, տհաս, ներգաղթ և հոդակապով, ինչպես՝ ապաշնորհ, արտասահման, ենթաբաժին, համամիտ: Ձայնավորով սկսվող արմատին կամ բառին ավելանալու դեպքում նածանցները սովորբար հոդակապ չեն ստանում օրինակ ՝ համերկրացի, մակերես, ընդարձակ:

2. Կարո՞ղ է արդյոք նույն նախածանցը հանդես գալ թե հոդակապով, թե առանց հոդակապի

Պատ՝ նույն նախածանցը որոշ դեպքերում կարող է հանդես գալ թե հոդակապով, թե առանց հոդակապի , ինչպես՝ ***տարբեր և տարաբախտ, գերհզոր, գերագնահատել, մականուն և մակագրել, նախդիր և նախաբան, փոխօգնություն և փոխատեղում:***

3.Որո՞նք են արդի հայերենի ամենագործածական նախածանցները

Պատ ՝ Ժխտական նախածանցներ՝ ան, ապ, դժ, տ, չ

Անդր/ա/անդրաշխարհ,Անդրկովկաս

Արտ/ա/արտաշնչել

Գեր/ա/ գերխնդիր, գերծանր

Ենթ/ա/ ենթաբաժին,

Թեր թերսնում, թերկատար

Հակ/ա/ հակամարդկային, հակաճառել

Համ/ա/ համակարծիք, համահայկական

Հար/ա/ հարանուն, հարակից

Մակ/ա/ մակնիշ, մակընթացություն

Նախ/ա/ նախասենյակ, նախաճաշ

Որո՞նք են հայերենի վերջածանցները

Պատ՝

Արդի հայերենի ամենագործածական վերջածանցները բավական շատ են նրանց մեծագույն մասը ձայնավորով է սկսվում ,ինչպես՝ -ակ, -անոց,-արան, -ենի, -եղեն, -երեն, -իկ, -ին, -իչ, -ոց, -որդ, -ուկ, -ուտ, -ություն

Որո՞նք են արդի հայերենի ամենագործածական վերջածանցները

Պատ՝ *արդի հայերենի ամենագործածական վերջածանցները բավականին շատ են : ըստ իրենց արտահայտած իմաստների դրանք կարելի է այսպես խմբավորել .*

-/ա/ բար, /ա/պես, -որեն – **‹‹ պես, նման, ձևով ››** **եղբայրաբար, բարոյապես, խիզախորեն**

ալի, ելի ‹‹ կատարելի գործողության հատկանիշ›› - ներելի, զարմանալի

-ական, -ային, -յան ‹‹ մեկին,մի բանի տեղին կամ ժամանակի հատուկ››

գերմանական, անապատային, հունիսյան

-ակ, իկ, ուկ / փոքր , սիրելի, / աթոռակ, շնիկ, արջուկ

-անի, եղեն /միատեսակ առարկաների ամբողջություն/ նամականի, կտորեղեն

-անք.վածք/ գործողության արդյունք/ - արտաղրանք, սանրվածք

- ավետ, եղ / մի բան ունեցող/ հարմարավետ,գունեղ

- արան,-անոց,-ուտ,- ոց,-ստան /տեղ/առողջարան, դպրոց, ճահճուտ

- է, յա / մի նյութից պատրաստված/- կավե, ոսկյա

- ելի , ալի/կատարելի գործողություն/- ընդունելի, նողկալի

- ին, -/ա/ գին/ սաստկական նշանակությամբ հատկանիշ/մթին,ջերմագին

-իչ, որդ,արար, պան վոր/մի բան անող/ -հսկիչ, ներկարար,ջրվոր

-ում, -անք /գործողության արդյունք/ հարձակում, արհամարհանք

Ածանցների տեսակները ըստ իմաստի Դաս- 3-րդ

1. Ըստ իմաստի քանի՞ տեսակի են լինում ածանցները

Պատ՝ Ըստ իմաստի ածանցները լինում են *մենիմաստ և բազմիմաստ: Մենիմաստ ածանցները միայն մեկ իմաստ են արտահայտում : Օրինակ՝-ավուն, վերջածանցն արտահայտում է նվազական, քիչ նման լինելու նշանակություն՝ կարմրավուն, կլորավուն: Ավետ վերջածանցն ունի /մի բան ունեցող,դրանով հարուստ/ նշանակությունը:*

2. *Որո՞նք են բազմիմաստ ածանցները*

Պատ՝ բազմիմաստ են այն ածանցները, որոնք բառերում գործածվում են տարբեր իմաստներով: Օրինակ՝ -արան վերջածանցով կազմվում են գոյականներ, որոնք ունեն հետևյալ նշանակությունները՝ ա/ «մի բան կատարելու տեղ» ընդունարան, լողարան, բ/ «գիրք, ժողովածու» / հանրահիտարան, երգարան/«լվացարան, մատուցարան»/:

3. *Ըստ ձևաիմաստային հատկանիշների ի՞նչ խմբերի են բաժանվում ածանցները*

Պատ՝ Ըստ ձևաիմաստային հատկանիշների լինում են հոմանիշ և հականիշ ածանցներ: Հոմանիշ են այն ածանցները , որոնք նույն կամ մերձավոր իմաստներ են արտահայտում,ինչպես՝-ական , -ային/ գյուղական, քաղաքային/:

Հականիշ են այն ածանցները , որոնցից մեկը բացասում , ժխտում է մյուսի իմաստը: Օրինակ՝արտագաղթ, ներգաղթ, պոչավոր- անպոչ, ընդգետնյա-վերգետնյա,համակրել - հակակրել

Ածանցների տեսակները ըստ խոսքիմասակերտ նշանակության

Դաս 4- րդ

1. *Ինչպե՞ս են տարբերակվում ածանցները*

Պատ՝ Ածանցները տարբերակվում են ըստ որևէ խոսքի մասի պատկանող բառեր կազմելու հատկանիշի

Գոյականակերտ ածանցներով գոյականներ են կազմվում , ինչպես՝ անակ/հաղթանակ/, - անոց/ ուսուցչանոց/-անք/ խնդրանք/, արան / բառարան, ույթ / լուծույթ/:

Ածականակերտ ածանցներով ածականներ են կազմվում: Ածականակերտ են ժխտական նախածանցները . –ոտ /բորոտ/, -ական/ տեղական/, -ային/ աշնանային/, -ավետ/ շահավետ/,

-լիկ / շեկլիկ/-ավուն / սևավուն/:

Թվականակերտ ածանցներով նոր թվականներ են կազմվում : Դրանք են ՝ րորդ/ երկրորդ, երրորդ, / - ական / վեցական/:

Մակբայակերտ ածանցներով մակբայներ են կազմվում :Օրինակ՝ -/ա/ բար- հերոսաբար, /ա/ պես – նյութապես, - որեն –նրբորեն, - ակի / շեշտակի:

Բայակերտ ածանցները բառահիմքի կամ արմատի վրա դրվելով ՝ կազմում են բայեր:Դրանք են ՝ ան, են, ն, չ, ատ, ոտ, կոտ, տ , ացն, եցն, ցն, վ:

Մոտ<u>են</u>ալ, թռ<u>չ</u>ել,ցատկ<u>ոտ</u>ել, հիշ<u>եցն</u>ել, սիրվել:

Կրկնություն որպես բառակազմական եղանակ Դաս 5-րդ

1.Ի՞նչ է կրկնությունը

Պատ՝ Կրկնությունը նույն բառի կրկնությամբ բարդ բառեր կազմելու եղանակն է ; Կրկնավոր բարդությունները լինում են հարադրական և համադրական:

Որո՞նք են հարադրական բարդությունները

Պատ՝ Հարադրական են կոչվում այն կրկնավորները , որոնց բաղադրիչները արտասանվում և գրվում են որպես առանձին բառեր, թեև ամբողջովին մեկ բառի իմաստ են արտահայտում: Օրինակ ՝հազար- հազար, երեք – երեք, ժամանակ առ ժամանակ

Ինչպե՞ս են բաղադրվում կրկնվող եզրերը

Պատ՝ **Կրկնվող եզրերը բաղադրվում են**

- Կից դրվելով /միության գծիկ/կաթիլ- կաթիլ, դեզ-դեզ
- Շաղկապով , ինչպես՝ մենք ու մենք, քեզ ու քեզ
- Գրաբարյան նախդիրով , ինչպես ՝ տուն առ տուն

Կրկնավոր հարադրությունների մեջ կրկնվող բառը հիմնականում անփոփոխ է մնում , բայց կարող է նաև զանազան փոփոխությունների ենթարկվել: Այսպես՝

ա/ Առաջին բաղադրիչի բառասկզբի բաղաձայնը երկրորդ եզրում դառնում է մ, ինչպես ՝ գրիչ- մրիչ, փոքր- մոքր:

բ/ Առաջին բաղադրիչի /ա/ ձայնավորը երկրորդ եզրում դառնում է /ու/, ինչպես՝ մարդ- մուրդ, մանր – մունր:

գ/ Ձայնավորով սկսվող բառի սկզբում երկրորդ եզրում բաղաձայն է ավելանում , ինչպես՝ ոլոր- մոլոր, աման- չաման:

դ/ Կրկնավորի առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայնն ընկնում է , ինչպես ՝առոք- փառոք, ակաս- պակաս:

ե/ Առաջին բաղադրիչի կամ նրա սկզբնամասի վերջին բաղաձայնը փոխվում և դառնում է ս կամ փ, ինեչպս՝ կաս- կարմիր, դափ-ատարկ:

Հարադրական բարդություններ Դաս- 6 -րդ

1. *Ի՞նչ է նշանակում հարադիր բարդություն*

Պատ ՝ Հայերենի բառակազմական եանակներից է հարադրումը: Հարադրությունները լինում են անվանական և բայական:

2. *Ի՞նչ է նշանակում անվանական հարադրություն*

Պատ ՝ Անվանական հարադրությունները անուն խոսքի մասերի պատկանող բառերից են հարադրվում և բառային ամբողջական իմաստներ են արտահայտում : Օրինակ՝ գիշեր- ցերեկ, խեղճ ու կրակ, ոտից գլուխ:

3. Ինչպե՞ս են միանում իրար անվանական հարադրությունների բաղադրիչները

Պատ՝ անվանական հարադրությունների բաղադրիչները միմյանց միանում են ՝

ա/ շաղկապով՝ թև ու թիկունք, զենք ու զրահ

բ/ միության գծիկով՝ ամառ- ձմեռ, անուն- ազգանուն

գ/ քերականական տարբեր ձևերով ՝ տակից- գլխից, բեռով- բարձով

4. Անվանական հարադրությունների բաղադրիչների միջև իմաստային ի՞նչ հարաբերություններ կան :

Պատ ՝ Անվանական հարադրությունների բաղադրիչների միջև իմաստային զանազան հարաբերություններ կան : Բաղադրիչ բառերը ՝ ա/ հոմանիշ են , ինչպես ՝ անթիվ- անհամար, բուք ու բորան

բ/ հականիշ են ՝ , ինչպես ՝ ամառ-ձմեռ, գիշեր – ցերեկ, ահել ու ջահել

գ/ իմաստով առնչակից են , ինչպես՝ նետ ու աղեղ, մազ- մորուք

Անվանական հարադրությունները արտահայտում են տարբեր իմաստներ.

- Միասնություն, ամբողջականություն , ինչպես ՝ հայր ու մայր, ծառ ու ծաղիկ,
- Հավաքականություն, ինչպես ՝ ծանոթ – բարեկամ, ծառ ու ծաղիկ
- Սաստկականություն , ինչպես ՝ լռիկ- մնջիկ, հեզիկ - նազիկ
- Մոտավորություն, ինչպես ՝ ինը- տասը, հիսուն - վաթսուն

5. Ի՞նչ է նշանակում բայական հարադրություն

Պատ՝ բայական հարադրությունները որպես կանոն , կայական բաղադրիչ ունեն, ուստի բայի իմաստ են արտահայտում : Օրինակ ՝բարև տալ, պար գալ, շուռ գալ,ասել -խոսել

6. Քանի՞ տեսակ են լինում բայական հարադրությունները

Պատ ՝ բայական հարադրությունները լինում են երկու տեսակ ՝

ա/ հարադրավոր բայեր

բ/ զուգադիր բայեր

հարադրավոր բայերը կազմվում են ոչ բայական բաղադրիչ ից և անել ,լինել, ընկնել, առնել, բերել, տալ բայերից: Օրինակ ՝ ելումուտ անել, լաց լինել, դուրս բերել, կրակ տալ :

Զուգադիր բայերը երկու բայերից կազմված հարադրություններ են:

Օրինակ ՝ աղաչել- պաղատել, ջարդել- փշրել, գրել- ջնջել, ուտել - խմել

Զուգադիր բայեր են կազմվում նաև որոշ բայերի և նրանց բազմատկականի ձևերից, ինչպես՝ կապել – կապկպել, քաշել – քաշքշել:

Բառաբարդում Դաս- 7-րդ

1. Ի՞նչ է նշանակում բառաբարդում

Պատ՝ Բառաբարդումը հայերենի բառակազմության ամենաակտիվ եղանակներից է : Բառաբարդումը երկու կամ ավելի արմատներից կամ բառերից նոր բառերի ստեղծումն է : Բարդ բառերի զգալի մասի բաղադրիչները միաձույլ , անանջատ են հանդես գալիս , ինչպես՝ գարնանամուտ, նամակաբեր, վերջերգ : Սրանք համադրական բարդություններ են:

2. Քանի՞ խմբի են բաժանվում համադրական բարդությունները

Պատ՝ համադրական բարդությունները բաժանվում են երմու մեծ խմբի՝ ա/ ձուլական բարդություններ

բ/ կցական բարդություններ

3. Ո՞րն է կոչվում ձուլական բարդություն

Պատ ՝ ձուլական բարդություն են կոչվում այն բարդ բառերը , որոնց բաղադրիչները սերտորեն ձուլված են միմյանց: Օրինակ ՝գնդացիր, հորաքույր, լուսացույց, ոսկեձույլ, հացթուխ, ձնծաղիկ:

Ձուլական բարդությունների առաջին բաղադրիչի ձայնավորը շեշտից կախված հնչյունափոխության է ենթարկվում, ինչպես՝ լուսաշող, հուսաբեկ, գրատուն , ձվաբջիջ, հրանոթ:

4. Ինչպե՞ս են միանում ձուլական բարդությունների բաղադրիչները

Պատ՝ ձուլական բարդությունների բաղադրիչները միանում են հոդակապով / հողագունդ, օդանավ, ազատատենչ, արդարամիտ/ կամ առանց հոդակապի/ հրշեջ, շաքարաման, բառիմաստ/ :

Կցական բարդություններ Դաս 8- րդ

1. Ո՞րն է կոչվում կցական բարդություն

Պատ՝ Կցական են այն բարդությունները , որոնք կազմվում են տարբեր բառակապակցությունների բաղադրիչների կցումով : Օրինակ՝ տան տիկին տանտիկին, հինգ հարկանի հինգհարկանի, մայր ցամաք մայրցամաք , խաղ ու պար խաղուպար :

2. Ի՞նչ շարահյուսական հարաբերություններ կան կցական բարդությունների բաղադրիչների միջև

Պատ՝ Կցական բաղադրիչների միջև կան հետևյալ շարահյուսական հարաբերությունները՝

- Որոշիչ- որոշյալի , ինչպես՝ սուրանկյուն, բացբերան, մայրցամաք
- Հատկացուցիչ – հատկացյալի , ինչպես՝ տանտեր, պատվոգիր
- Համադասության, ինչպես՝ աղուհաց, նիստուկաց, առնտուր

Կցական բարդություններում բաղադրիչները շեշտից կախված հնչյունափոխության չեն ենթարկվում: Կարելի է համեմատել ՝ *կեսլուրջ, և կիսաձայն, շուրջբոլորը և շրջագիծ, մեջտեղ և միջատ:*

Հապավում Դաս 9-րդ

1. Ի՞նչ է նշանակում հապավում Պատ՝ Հապավումը բաղադրյալ անունների կրճատված մասերի միավորումով բաղադրություններ կազմելու եղանակն է : Հապավում բառը հենց կրճատում է նշանակում:

2. Քանի՞ տեսակ են լինում հապավումները

Պատ՝ Հապավումները երեք տեսակ են լինում ՝ ա/ տառային, բ/ վանկային, գ/ բառային

3. Ո՞րն է կոչվում տառային հապավում

Պատ՝ տառային հապավումները կազմվում են բաղադրյալ անունների բաղադրիչ բառերի սկզբնատառերից: Օրինակ ՝ ԿԳՆ- կրթության և գիտության նախարարություն, ԿԲ կենտրոնական բանկ :

4. Ինչպիսի՞ն են լինում տառային հապավումները

Պատ՝ Տառային հապավումները լինում են հայերեն կազմություններ և փոխառություններ: Փոխառյալ են ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ,ՖԻԴԵ

Տառային հապավումները սովորաբար մեծատառով են գրվում , ինչպես՝ ԳԱԱ- գիտությունների ազգային ակադեմիա,ՀՁ – համատեղ ձեռնարկություն:

Կան բացառություններ , ինչպես՝ բուհ, ջէկ, հէկ , որոնք գրվում են փոքրատառով: Հապավումներից հետո կետ չի դրվում

Վանկային հապավումներ Դաս – 10- րդ

1. Ինչպե՞ս են կազմվում վանկային հապավումները

Պատ՝ Մասային կամ վանկային հապավումները կազմվում են բաղադրյալ անունների բաղադրիչ բառերի առաջին մասերից: Օրինակ ՝ ուսմասվար – ուսումնական մասի վարիչ, զինղեկ, զինվորական ղեկավար:

Կրճատվող մասն անխտիր բաղաձայնով է վերջանում , ինչպես՝գիտ, զին, ֆին, տնտ, ուս:Այդ մասը կարող է համընկնել վանկին / զին-վո-րա-կան/այստեղից էլ վանկային տերմինը:

2. Ինչպե՞ս են կազմվում բառային հապավումները

Պատ՝ Բառային հապավումները կազմվում են բաղադրյալ անունների բաղադրիչ բառի առաջին մասից և ամբողջական բառից : Օրինակ ՝ գիտաշխատող- գիտական աշխատող, տեխզննում – տեխնիկական զննում , պետհամարանիշ – պետական համարանիշ:

Մասային և բառային հապավումներն անվանում են նաև հապավական բարդություններ:

Եզրակացություն

Կրթությունը պետք է համարվի ցանկացած երեխայի մտավոր ,հոգեկան և ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոց :

Երեխայի որևէ առանձնահատկությունը և տարբերությունը չեն կարող արգելք հանդիսանալ իրացնելու իր կրթություն ստանալու հիմնարար իրավունքը :Ուստի որակյալ կրթությունը պետք է ենթադրի մի գործընթաց , որն ուղղված է բարելավելու բոլոր սովորողների կրթական կարիքները :

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնական գործընթացում ԿԱՊԿՈՒ սովորողների համար ապահովել սովորելու և հարգանքի այնպիսի մի միջավայր , որտեղ երեխան ,անկախ իր հաշմանդամության աստիճանից,իրեն ինքնավստահ և ընդունված կզգա, կհավատա իր կարողություններին և կբարելավի իր ինքնագնահատականը :

Հարկ է նշել սակայն, որ այս ուսումնական փաթեթը նախատեսված չէ ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար , քանի որ նրանց հետ աշխատանքը այլ պայմաններ և պահանջներ է թելադրում , իսկ այդ գործընթացը կազմակերպելու համար կան բազմաթիվ միջոցներ և ճանապարհներ : Չկա սովորեցնելու միայն մեկ ճիշտ ուղի , ինչպես նաև չկա սովորելու ճշգրիտ միակ ուղի :

Օգտագործված գրականության ցանկ

Մանուկ Մկրտչյան Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանականտեսական տեսական և գործնական հարցեր

Սուսաննա Թադևոսյան Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց- ձեռնարկ /2017թ/

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն / Ներառող դասավանդում / մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար

Է.Եզեկյան ,Ա.Սարգսյան , Ռ. Սաքապետոյան Հայոց լեզու ավագ դպրոցի /հումանիտար հոսք / 10-րդ դասարանի դասագիրք